

# ՊԵՐՃ ՊՈՅԵԱՆՑ

ԵՒ

## ՆՈՐԱ ՎԵՊԵՐԸ

Ուսումնասիրութիւն

Ն. ՔԱՐԱՄԵԱՆՑԻ

...Zufällig naht man sich, man fühlet, man bleibt,  
Und nach und nach wird man verflochten;  
Es wächst das Glück, dann wird es angefochten,  
Man ist entzückt, man kommt dem Schmerz heran,  
Und eh man sich's versieht, ist's eben ein Roman...  
Greift nur hinein in's volle Menschenleben!  
Ein jeder lebt's, nicht vielen ist's bekannt,  
Und wo ihr's packt, da ist's interessant.

Faust. I. 129—137.

Աշանդիպում ենք պատահմամբ, զգում, կենում,  
Անտ գնետէ հանդոյցներով շղթայւում,  
«Աճում է երջանկութիւնն, յետոյ հալածւում.  
Արապուրւած նըանով՝ մեզ գտնում է աղջտ,  
«Դեռ չը զարթած ցնորքից, վէան է սկսում» յաւէտ...  
«Մեկնեցէք ձեռներդ գէա շոեմարանը կենաց.  
«Տեսել ենք ամենս, շատերը ենք անգէտ,  
«Ուստի կուզէք նիւթ առէք, գրաւէչ է շահաւէտ»:

Ֆաստ. Ա. 129—137.

Բ.

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ.

Առողջ և բնական դարդացումն ունեցող գրականութիւնները բանաս-  
տեղծութիւնով են սկսում իրենց գողովթիւնը. հին դասական գրականու-  
թիւնների պատմութիւնը հաստատում է այդ ճշմարտութիւնը: Յակտնի է

որ հազկական հին մատենագրութիւնը դժբաղդաբար բնական և կանոնաւր զարգացումն չէ ունեցել. նա ծնունդ է հակեկեղեցու պիտուքի, ստեղծըւած է եկեղեցականների ջանքով, ծառափել է երկար ժամանակ գրեթէ միան եկեղեցուն և սեպհականութիւնս է եղել եկեղեցականների. ուստի հասկանալի է նորա բանաստեղծութիւնից զուրկ լինելը, հասկանալի է նա մանաւանդ վիպական բանաստեղծութիւն կատարեալ բացակազութիւնը: Հազկական հին կամ գրաբար մատենագրութիւն ստեղծւելու նըպատակն էր եկեղեցական դպրութիւն ունենալը. այս պատճառով նա սկսում է թարգմանութիւններով, ծաղկում է մի ուղղութիւնով, ասինքն՝ նորա բոլոր արտադրութիւնները, լինին նորա բանաստեղծական թէ գիտական, հետեւանք են եկեղեցու պիտուքին. նորա վիպական բաժինը սրբերի վարքն է (Legendre), քնարերգականը միասնաակ ներբող է և դուրկ է քնարերգական աղաս երգերից, երգիծաբանութիւնից և եղերերգից, իսկ ամենաբարձր տեսակը բանաստեղծութիւն, թատրերգութիւնը, դուրս վենելով բոլորովին եկեղեցու շրջանից, ամենակին ծնունդ անդամ չէ առել Ազնուամենաշնիւ այդ գրականութիւնը կրում է հազկական հոգու զրոշմը. ուստի իրաւամբ մեր հին գրաւոր կամ գրաբար մատենագրութիւնը կարող ենք անուանել հաչկական—քը բիստոն է ական գրականութիւն:

Տարբեր եղաւ մեր նոր կամ աշխարհիկ գրականութեան զարգացումն Մեր ազգավին զարգացման ընթացքն անպէս է եղել, որ մենք որոշեալ դրական առաջադիմութիւն պէտք է անժխտելի կերպով ունենալինք և ունեցել ենք. Մեր ազգը բանաստեղծութիւն երկու առաջին տեսակների շրջանն էլ, վիպականի և քնարերգականի, անցել է, բայց երրորդին՝ ան է թատրերգականին չէ հասել. եթէ հին դարրութիւնը բոլորովին իւր շրջանից դուրս է համարել ժողովրդական գրականութեան արտադրութիւնները և չէ կամեցել ծառաւել դրան, այդ չէ նշանակում, որ մենք այն շրջաններից չենք անցել երբէք. եթէ այս վերջին ենթադրութիւնս անելու լինինք, այդ կը հերքէր գրաբար մատենագրութեան մէջ պատահ արար մնացած հետքերով և ափմեան ժողովրդական բանաւոր գրականութեան մնացորդներով. Դարերի ընթացքում հազկական դպրութիւնը բամառութեամբ զլացաւ ծառաւելու հակ ողու բոլոր արտադրութիւններին, նա մի տեսակ հիւր ոգլի Փ—սրբադրուչմ մատենագրութիւն էր. բայց վերջապէս կոտրեց նորա լամառութիւնը և ժողովրդական պահանջը բաղթեց դարաւոր նախապաշարման: Գրաբարի անմատչելի դառնալն և նորանով գրելու գժւարութիւնը պատճառ եղաւ աշխարհաբարի բարձրանալուն. և երբ լեզուն բարձըրացաւ իւր ընկած վիճակից, նորանով պահանձ գրական արտադրութիւնների արժեքն էլ աւելացաւ. ժողովրդական և կէս ժողովրդական երգերը գրի առնւեցին, սրբերի վարքն և խրաւական պատճութիւնները ժողովրդի լեզուով գրւեցին և տարածւեցին:

Գործնական կեանքին վաղուց արդէն ծառալում էր գրովիշեան արժանուր. նամակները, դաշնագիրներն և պատմանազիրները գրում էին սովորաբար աւելի աշխարհաբար կամ աշխարհաբարով խառն գրաբար. սական զեռ ևս չը կար աշխարհիկ գրականութիւն, մինչև որ ժամանակը խաչատուր Արտիվանի ձեռով լուծեց աշխարհաբարը կաշխանդող կապերը. Արտիվանի «Աէրք Հաւաստանին» մի կողմով համեմատելի է Դանաէի «Աստուածակն կատակերգութեան»: «Աէրք Հաւաստանին» թէն շատ հեռու է դասական և չարատն չքնաղ «Աստուածակն կատակերգութիւնից», բայց մի պարագանով շատ նման է. ինչպէս նա հիմնաքար եղաւ խապական գըրականութեան և լեզուի, նունակչու Արտիվանի վիպական և զերեր գըրականութեան և գեղուի, հիմնաքար մեր արենելեան գրական լեզուի. Մեր նոր գրականութիւնը ծաղկեցնող առաջին մշակները անխստիր կամ Արտիվանի աշխակերտներն են և կամ աշխակերտների աշխակերտները: «Աէրք Հաւաստանին» իրբու բանաստեղծութիւն և գեղարւեստական արտադրութիւն՝ շատ փոքր արժէք ունի. նա մի գերմանական իդէալական (գաղափարական) ուղղութեամբ գրւած անշաջող վիպասանութիւն է, բայց հեղինակի բուռն գրացումները նորան կենանութիւն են տալիս և նա կարողանում է աղղել ընթերցողի վիրաւ. Արտիվանի աղղ բանաստեղծութիւնը մի կողմով զուտ հակական է. աղղ նորա գրացումների խորութիւնն է, որ արտապատւում է Գրիգոր Նարեկացու նման բառերի անհնարին կոտակումալ. Աս պատճառով «Աէրք Հաւաստանին» ևս չաջող կերպով կարելի է անուանել «Ապրիկենական ի խորոց սրաէ խօսք ընդ Աստուծու»:

Իւր ամենին ըմբռնելի լեզուով, անկերդ զգացումներով և վառ հակընակիրական ոգով, Արտիվանը զրաւեց մի անգամից ընդհանուրի համակրութիւնը. միւս կողմից նա նոր վիպասանութեան օրինակին ծանօթացրեց հաւ հասարակութեան, որի ճաշակն առնելով սկսաւ ուա և աճուհետն աղղ տեսակ նիւթ պահանջել. Ռուսական արշաւանքների և աշխարհակալութիւնների հետեւանքն եղել էր համեմատաբար հանգիստ նիւթական կեանք և մուտք ուաման և գիտութեան ճաշակի. Կավին արդէն նորաբողը ծաղիկներ հակական գաւառներում և գիտերում. թէ Ներսիսեան և թէ տէրութեան ուսումնարանները տաել էին նորակիրթ երիտասարդներ, որոնք ոգերւելով Արտիվանի բանաստեղծութեամբ, սկսան նորա շաւզով ընթանալ և զարգացրին մեր նորածին դրականութիւնը. Արտիվանի աղղ առաջին աշխակերտներից էր մեր ալժմեան արդիւնաւոր վիպասան Պերճ Պուշկանցը, որի գործների ուսումնասիրութիւնից առաջ, նորա կենսապրութեան հետ ծանօթացրինք, որ մեղ նրա վիպասանութիւն շատ կէտերը հասկանալուն նպաստում է:

Ակդ ուսումնասիրութեան նպատակն է Պուշկանցի վիպասանութիւնների գեղարւեստական և գրական արժէքը որոշել՝ միանգաման և նորա աեղը գրականութեան մէջ:

## Պ.

ՊՈՅԵԽԱՆՑԻ ԿԱՐՄԻՐԸ ՎԻՊԱՍԱՌՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

Ընդհանուր էր մնղագրանքը զէպի մեր պատմագիրներն, որ ժողովրդական կիանքը անտես էին արել իրենց երկերի մէջ։ Այս մնղագրանքն հասնում էր անարդարութեան, որովհետև նոցա դատում էին մեր ժամանակի չափով։ Հասկանալի է աղդ արդէն, որ անցած և անդառնալի կորուսոր վերականգնել կարելի էր միան եռանգուն լինելով նոր գրականութեան մէջ աղդ կողմով։ Այս եռանդն աճչափ շատ էր, որ միան աղդ էր կարծում գրականութեան նիւթ։

Խաչառուր Արովեանի գործն առաջին փորձն էր ժողովրդին մօտենալու, բաց անպիսի փորձ, որ բոլոր ան ժամանական գաղափարներով տողորուած երիտասարդութեան պիտի ոգեսրէր։ Աղջկէս էլ եղաւ. «Աէք Հաւասատանին» դարձաւ գեղագրութեան օրինակի նման մի օրինակ մեր ժողովրդական գրողներին։ Լսենք Պոյոշեանցին ալդ մասին, որովհետև աղդ խօսքերով որոշում է նա իւր ապագակ գործունէութիւնն։

«...Մասհելով այս ամենը Խաչառուր Արովեան ուսումնականը և զգալով ան-  
« շուշտ աղջի աւանդութիւնները և ծէս ու երն կենդանացնելու  
« հարկն, գըեց իւր ըԱէքի Անթուծնին արդեւնառը շարագը ու-  
» թիւնը, նկարագրելով նորա մէջ նրեանու նահանգի Քանաքեռ գիւղի լեզուի  
« գարձուած քը և անային մի քանի սովորութիւնն քը...։ Սա առաջնուն  
և եղաւ, որ մի դիւցագննի ձեւ քով ընծայեց մեր աղջին իւր առանցին կե-  
« նաց նկարագիրը և յայնապէս ցոյց տուեց...։ Թէ չէ եղել Աղասին, կամ թէ ե-  
« ղիւ է մի անշնչան ոմն, հոգ չէ. Աղասու վերայ պատմուածները ամեն հայ մար-  
« դու յատկութիւն է...։»

Ուրիմն լաւ հասկանալով վիպական բանաստեղծութեան էութեան մի մասն, Պոյոշեանցը Արովեանի գործը համարում է նկարագիր և ճշգրիտ նը-  
կարագիր կեանքի. յակ նրա վիպական ձեր և Աղասու անձնաւորութիւնը  
նրա համար երկրորդական դեր ունի. նա կարող էր և չը լինել, միան  
թէ սովորութիւնները և լիզուի նկարագիրը լինէր. վիպական գաղափա-  
րը գույութիւն չունի նրա համար, վիպական ձեր մի աէն  
կամական ձե է, որ ընթերցանելի լինի գրամծքը. նա թերեւ համա-  
ձանէր յակ փոխանակ աղդ վիպական ձեն՝ ընդունել բուն պատմական ո-  
ճը, որպէս զի ժողովրդի կեանքի նկարագիրը ճշգրիտ լինի և ոչ մի չինծու  
բան չը գտնէի աճնանդ։ Սրա պարզ հնուանքն ան է, որ Պոյոշեանցը վի-  
պասանութեան նոր ուղղութեան է հաւանում, նա պաշտող է իրական ուղղութեան և ուղղութեան և որ զվասարն է անկախ և զվասական պարբեցութիւնից  
և ուղիւ պատճառներից դրդւած, քան եւրոպական իրական բանաս-  
տեղները. Մեր ուսումնասիրութեան ընթացքում մենք շատ անգամ  
առիթ կ'ունենանք ապացուցանելու ալս իրողութիւնը։

Վերոբիշեալ լառաջարանի խօսքերին հետևում է Պոօշեանցի զործունէութեան ծրագիրն, որ ստիպւած ենք ամբողջովին լառաջ բերելու.

«Կարգալով մեր նախնեաց պատմութիւնները և գանելով նրանց մէջ ժողով վրդեան կենաց մի քանչ նկարագրեր, աչքներիս առաջն ունենալով մեծաքանչ քաջ Արովլեանի ՎԱՅՈՍՏԱՆԻՐ, սիրակարուեցանք մեր հայոց մեղ թողած և աւանդութիւնները վերայ և կամ լով ծառայել ազգիս, իբրև յանձնէ եղեալ, երգեց յենք ըստ մեր տիկը կարողութեան մեր հայրենեաց սովորութիւնը, վարքին և այլ արագիսի արտաքին ծիսեըը. բայց դեռաւու թե ամբ մեր գորուածքն ախոր ժելի անելու համար սկըեւ և լի ազգիս, թէ մեծին և թէ փաքը և ն և տեսնելով կոյս սկըոյ սըրութիւնը, երկու կուսւց միջնորդութեամբ պատմեցինք «Աշտարակ գիւղի սովորութիւնը, ի մէջ բերելով ամենափառ չայցի համարուած առաջորդութիւններն անդամանց զանազան պատուի վահած սովորութեանց մէջ կան բարուական զասկը և թէ ալդ սովորութիւնները զուա հակական են և Արարատեան նահանգի անխառն բնակիչներին լատուկ, որոնց ներկայացուցիչ կարող են համարւել Աշտարակցիք:

Յառաջարանի վերջում կրկին անգամ պարզ ասում է՝ թէ բալոր նպատակը սովորութիւնները և լեզուն նկարագրելն է եղել, և որպիշեան չէ կարողացել հեղինակը բարիկենդանի չորիքչարթի օրւանից մինչև ծաղկազարդ գիւղական կեանքը նկարագրել, թողնում է պատեհ ժամանակի. Այս խոստումը կատարում է նա «Հացի Խնդրի» մէջ, ուր նա վիպասանութիւնը սկսում է «Այս և Վարդիթերի» վերջանալու կէտից:

«Հացի Խնդրի» լառաջարանն ալսպէս է սկսում.—«Այս և Վարդիթեր» վիպասանութեանս մէջ Արարատեան նահանգի սովորութիւնները նկարագրելում՝ վիպասանութեան պահանջմանց համեմատ պակաս էր մընացել բուն բարիկենդանից մինչև ծաղկազարդի կեանքը. Նոյն դրվիս լառաջարանի մէջ ևս խոստացել էի, երբ և իցէ, ալդ սովորութիւններն էլ լրացնեմ, որով Հակասուանի վլխաւոր նահանգի տեղական կեանքի պակերը իւր բարբառի, առաւծն ի րի, աւանդութիւնն ի րի և ծէս եր ի հետ աղատած կը լմնեմ ժամանակի անհետացնող ժանիքներից.... Նկարագրելով «Այս և Վարդիթերի» մէջ 40 թւականների տեղական ոովորութիւնները, ևս դիտմամբ աչժմ ևս «Հացի Խնդրի» նիւթը վերցրի. Նոյն թւականներից, որ մի որոշեալ ժամանակի կեանք ամբողջապէս նկարագրեմու.

Ակապիսալ ուրեմն, Պոօշեանցը իւր ալդ երկու գրւածներով կամնցիլ է վիպական ձեռով միաւն ժողովրդական կեանքի նկարագրերը տալ. Այս նպատակին հառնելու համար, նա վերցրել է 40 թւականների Արարատեան կեանքի շրջանն և նկարագրել է երկու վիպասանութիւնների մէջ, լառաջ ընթիւնով աճնտեղ ամբողջ տարւան կեանքը, առանց մի օր անդամ բաց

թողնելու, Այս երկու վիպասանութիւնների մէջ պատմական անձնաւորութիւններ չառաջ չեն գալիս և ոչ էլ պատմական դէպքեր. առքա ժամանակակից հասարակական վիպասանութիւններ կարող են համարել: Պոօշեանցի միւս երկու վիպասանութիւններն ունին պատմական տիպար, թէև կեանքի նկարագիրն աւելի ժամանակակից է, ինչպէս աճնոել նպատակ է ունեցել նողնակը սովորութիւնները, ծէսերն անմահացնել, ախտող էլ ցանկացի էնա իրեն հասած պատմական տեղեկութիւնները ազատել կորստից, ուստի և սոցա վերաէ պիտի նակենք ոչ իրբե զուտ պատմական վիպասանութիւնների, առ դարձեալ աւանդութիւնների ժողովածովի վերա:

## Դ.

«ԱՕՍ ԵՒ ՎԱՐԴԻԹԵՐ» ՈՒ «ՀԱՅԻ ԽՆԴԻՐ».

Յօդւածիս ճակատի նշանաբանի ճշմարտութիւնը՝ թէ պէտք է միանձնուք մնկնել դէպի մարդկացին կեանքի շնումարանն և ամենայն տեղ հետաքրքրելի և շահաւէտ նիւթ կարելի է գտնել, ապացուցանւում է Պոօշեանցի վիպասանութիւններով. նա դրեթէ անխափիր (բացի նահենից) իւր նիւթն առնում է մի գիւղի (Աշտարակի) կեանքից, բայց բոլոր նրա վիպասանութիւններն էլ հետաքրքրելի են և նրանց մէջ նկարագրած կեանքի հանգամանքներն և անձնաւորութիւնները իւրեանց տիպարով ամենազեղեցիկ նիւթեր են քաղաքակրթութեան պատմութիւն դրայի համար: Ինչպէս ապացուցինք՝ Պոօշեանցի առաջնակարգ նպատակը նոյն իսկ քաղաքական գործականութեան է և ոչ բան աստեղ զականը, որ ի հարկէ երբեմն էաղթողէ հանդիսանում և ստիպումէ անդամահասող արձանագրողին իւր փառելոց գնալ. այս հանգամանքն աշքի առաջ ունենալով, մի նշանաւոր զուգադիպութեան վերաէ մատնանիշ լինել կը կամենավի:

Ֆրանսիական վիպասանութեան իրական (ուշալական) ուղղութեան խոկական հալլը, Հօնորէ դը Բալզակ (1799—1850), գրեթէ նոյնն է ցանկանում տալ ֆրանսիական հասարակութեան համար և վիրաւի տալիս է իւր վիպասանութիւնների մէջ, ինչ որ Պոօշեանցը մեր հասարակութեան: Ահաւասիկ Բալզակի խոկական խօսքերը՝ «Երբ կարդում ենք ան չոր ու ցամաք և անտառնելի ցուցակագրութիւնները, որ պատմութիւն են կոչւում, ան ժամանակ նկատում ենք, որ բոլոր երկների և ժամանակների մատենագիրները մոռացել են տալու մեղ բարքերի նկարագիրն և պատմութիւնը: Ահա այս պակասորդը կամենում եմ, ինչքան ուժերս կը ներին, լուցնել Ես կամենում եմ հասարակութեան կրքերի, առաքինութիւնների և ախտերի ամբողջ ստացւածքը ներկացնել, նման բնաւորութեանց հաւաքումով ախտարներ տալ և երկաթի տոկունութեամբ և ջանքով Ժա-

րու մասին ակն զիրքը գրել, որ մեղ զժբաղդաբար Աթէնքը, Հոռվիմը, Տիրոսը, Մեմիփիսը, Պարսկաստանն և Հնդկաստանը չեն թողելու<sup>1)</sup>։

Ի հարկէ երկու բանաստեղծների նոյնանման նպատակից չէ հետևում և նոցա նոյնատեսակ լինելը. Բալզակ, համաձան ֆրանսիական հասարակութեան և իւր բանաստեղծական բարձր աւիճին, Պուշկնացի հետ չը պիտի համեմատել, սակայն անա զարձեալ մի ապացուց, թէ Բնչակէս ժամանակով և տարածութեամբ հեռաւուր մարդիկ նոյն շափոք կարող են ընտրել միտեանցից անկախ կերպիւ Բալզակ լաւ. հասկանում էր մարդկակին զործողութիւնների ներքին շարժառիթները և ակն կեանքի պատկերը, որ նա կամնում էր տալ, պինդ շաղկապւած էր ալդ ներքին շարժառիթների հետ, որ, նրա կարծիքով, մեր դարում ոչ եթէ սէրն և վայելչութիւնն է, ալլ փողը, որին երկրապատմ են ամենքը. Պուշկանցը թէե իրբն սուր նկատող և բանաստեղծ տեսնում է ալդ շարժառիթները, բայց կարծէք խոս է տալիս նրանցից. Նա իւր նպատակն աչքի առաջ ունի. միշտ ձգառում է կեանքի արտաքին պատկերը տալ և ըստ կարելովն փախչել ներքին շարժառիթներից. սակայն ալդ փախուստը միշտ չէ լաջողումնրան. օրինակ «Հացի Խնդրում» ընդհակառակն, իւր բանաստեղծական տաղանդի խորհիւ, հակառակ իւր ցանկութեան, նկարագրւած տիպարների և հասարակութեան ներքին կեանքը թեսակիսում է արտաքին նկարագրութիւնն և առաջնակարգ տեղը բռնում։

Պուշկանցի «Սօս և Վարդիթերն» և «Հացի Խնդիր»-ը իրբն միմնանց հետ կապւած Աշտարակի կեանքը նկարագրող վիպասանութիւններ, միամին կ'ուսումնասիրենք. Զենք կարող ակստեղ մի երկրորդ զուգադիպութիւնն և Բալզակի հետ չը նկատել. Բալզակի «Մարդկապին կատակերգութիւն» վիպական երկն էլ վիպասանութիւնների կապակցւած շարակարութիւն է.

## Ե.

### «ՍՕՍ ԵՒ ՎԱՐԴԻԹԵՐՆ».

«Սօս և Վարդիթերն»<sup>2)</sup> վիպասանութիւնն նկրւած է Աշտարակ գիւղի մեծին և փոքրին մի սասանաւորով, որի ոճն ու ողին իսկովն վշեցնում է ընթերցողին ալէքք Հաւասարանիո գրքի տաղաչափական կտորները.

Վիպասանութեանս բովանդակութիւնն համառօտ վշենք ակստեղ.— Աշտարակ գիւղում երկու գիւղական հասարակութեան կատարելատիւզ ներ-

1) Dr. A. Stern: Geschichte der Weltlitteratur. 1887 Stuttgart. S. 673.

2) Աբը Պուշկանց. «Սօս և Վարդիթերն», Երկրորդ տպագրութիւն, Թէֆլիս. 1887. տպ. Վարդանեանի.

կազացնող երիտասարդներ սիրահարւած են միմնաց հետ տղան, որի անոնք է Սօս, գիւղացոց միջին կարողութեան տէր տան զաւակ է, իսկ աղջիկը, Վարդիթերը, հարուստ և առաջնակարգ ընտանիքին Ալրոտ ծագումը մեղ չէ նկարագրում բանաստեղծը, ազ նրա լաւաջաղիմութիւնը Աղջկան ծնողները սկզբում հակառակ են երկու երիտասարդների միաւորութեան, սական նրանց անդրանիկ որդի Արտաշիրը և զիւղի արքացու վարժապետ Գարեգինը, որ Սօսի սրտակից ընկերն և ողջում-աղջէն է, լաջողում են փոխելու ծնողների կարծիքը լոգուտ Սօսի Գարեգինի ճարտարութեամբ Հանավաճքում սուրբ կարապետի տօնին, վարդավառին, Վարդիթերի մայրը բոլոր սեղանակից Աշոտարակցիների առաջ խոստանում է իւր աղջիկը տալ Սօսին, մի բոլորովին տարօրինակ ձևով էլ աղջիկ ու տղակ միմնաց ձեռ են տալիս Արշաւիրն և նրա մայրը կարողանում են չեթումի, տան տիրագ, միաքն էլ փոխել լոգուտ Սօսի և նշանդրութիւնը կետաձգում է մինչև աշունք, Բայց երբ Սօսը իւր նպատակին արդէն մօտեցած էր կարծում, Արշաւրի միաքը փոխում է, նա որ աշխատուել էր աս գործը զըսլս բերել, այժմ պահանջում է նրա քանդումը, միւս կողմից էլ Սօսի փեսան, Տիրանը, 15 ոռոքի փող վաստակելու համար, աշխատում է համոզել Սօսին մի ուրիշ աղջկան հետ ամուսնանալու, բայց երբ չի լաջում, թէ իսմ է անել տալիս և ինքն էլ ճեթումի տունը գնալով, խափառակում է նրանց, թէ իւր աներոջ տղի վնտեկցն են ընկել և ուղում են անպատճառ պսակել իրենց աղջկան հետ Տիրանի խօսքերը կատաղեցնում են Ճեթումի ընտանիքն և նոքա մերժում են Սօսին. Սօսը խելազարւում է, Վարդիթերն իւրանդանում, Գարեգինը զրեթէ վաղենացած՝ Սօսին վտ է բերում գիւղը, բայց նա առնելով իւր Վարդիթերի մահան գոլժը, ինքն էլ մեռնում է. նոցա միասախն են թաղում և Գարեգինը նոցա զամբանի վերակ գրել է տալիս.

« Ահա սիրու պատուներ,

« Մի ագահ մարդու զաներ,

« Ով ըստեղից անց կենակ,

« Թիշի Սօսն և Վարդիթեր ».

Վիպասանութիւնը վերջանում է մի եղերական երգով, որ Գարեգինը երգում է իւր սրտակից սիրելիների վերակ:

Վիպասանութեան առակը (fabula), ինչպէս տեսնում է, շատ սովորական է և փոքր. նրա նեղ շրջանակը չէ համապատասխանում վիպասանութեան ընդարձակ ծաւալին, իսկ սիրու զարգացման նկարագրին նւիրած բաժինը անհամեմատ մեծ է, քան եթէ խանդարող հանգուցներին նը-փրւած բաժինը:

Վիպասանի նպատակը լինելով «երկուց կուսից միջնորդութեամբ պատմել Աշտարակ գիւղի սովորութիւնք», ուշք չէ զարձրել զործողութիւնների և անձնաւորութիւնների բնաւորութեանց և ձգումների զարգացման

վերալ. վիպասանութեան հերոսը, Սօսը մի կողմից ներկաւանում է մեղիքին կատարելատիպ գիւղացի աշխատաւոր և քաջ երիտասարդի, միւս կողմից բարձր հոգեկան ձգտումն ունեցող և զգալուն գիւղացի մարդու, որով բացատրում է և նրա սերտ բարեկամութիւնը Գարեգնի հետ. իսկ Գարեգնի անձւէր սէրը հետեանք է երեխ Սօսի աղդ իսկ բարձր բարուական ձգտման, որ արտապատում է և նրա բանաստեղծական ալիւնով. Սօսը ներկաւացրած է իրեն գաղստիարական տիպար (Idealtypus) գիւղացի երիտասարդի, որի աղդ աստիճան առաւելութիւնները մեղ չէ բացատրած և կամ նոցա զարգացումն իրենց պատճառներով չէ դրած մեր առաջ, այլ ուղղակի տւած է, որ նա քաջ և կորովի էր, խելօք էր, համեստ էր, բարողական էր, եկեղեցասէր էր, բանաստեղծ էր և ալն և ալն, ինչպէս նաև Գարեգինը գիւղական համեստ, բաց կշու ունեցող ուսուցչի տիպար է և անձնւէր ընկիքը. երրորդ գաղստիարական (իդէալական) անձնաւորութիւնը պիտի լինի Վարդիթերը, որի նկարագրութիւնը սական համապատասխան կարելի է գտնել գիւղական աղջկակ տիպարի, եթէ գաղստիարական համարենք նրա մէրը դէպի հասարակական գիրքով իրանից ստոր Սօսը:

Պոօշեանցի ալս վիպասանութեան միւս բոլոր անձնաւորութիւնները առած են ուղղակի կեանքից, նոցա գծագրութեան մէջ չը կաւ ոչ մի լրդկած և ուղղած գիծ, նոքա ամենն ևս նկարած են ուղղակի ընութիւնից. ակսպէս Հեթումը, հարուստ, աշխատասէր և լուր դիրքն հասկացող գիւղական ծերունին, նորա աշխատասէր և լամառ կինը, Արտաշէր գիւղական հարստի որդին, Պարէտ Սօսի մնծ և հօր տեղ բանող եղբակը, շահասէր և անխիղճ Տիրանը, Գարեգնի Անոլ քուրը և ալն, Եթէ առաջին երեք անձնաւորութիւնները, Սօսը, Վարդիթերն և Գարեգինը ապացուցանում են Պոօշեանցի ի դէ ա լ՝ ա կ ա ն (զաղափարական) ուղղութիւնը, որ հետևանք է Արտվեանի հետևողութեան, միւս երկրորդական անձանց նկարագրիը նրա իրական (ռէալական) ուղղութիւնը, որի առաջին ներկաւացուցիչներից մէկն ինքն է մեր գրականութեան մէջ.

Դառնանք ակժմ վիպասանութեան բուն նպատակին, ապսինքն նրա մէջ նկարագրած սովորութիւններին և ժողովրդական կեանքի պատկերներին, որի միան արտակալութեան իրերն մի ձեւ է ծառապում վիպական կապն և բարողական գաղստիարը, որ է սիրու բար ձրութիւնը կեանքի ամեն չահերից. Վիպասանութիւնը սկսում է մարտի 15-ից և տևում է մինչև միւս տարւան բուն բարիկենդանը. ալս շրջանի գիւղական կեանքի բոլոր երեսովթները նկարագրած են ապատեղ գրեթէ առանց բացառութեան և առանց ուշ դարձնելու, թէ արդեօք կապ ունի՞ն վէպի առակի հետ թէ ոչ և եթէ չունին էլ՝ ստեղծուում է մի շատ թուլ կապ, որպէս զի առիթ լինի նկարագրելու գիւղական կեանքի մի որ և է նշանաւոր կողմը. Ծառզարդարի շաբաթ երեկովից է սկսում վէպը և նկա-

բաղրում է ծառղարդարի կիւրակէն, աւագ երկուշաբթին, երեքշաբթին (խնոցահարի և վիմար իմաստունի օրը), հինգշաբթին (ոտնալւագի օրը), ուրբաթ զիշերան եկեղեցական սուզը, շաբաթ օրը (ձու նաշխելու օրը) և երեկովսան թաթախումն, Զատիկի օրւանից սկսում է մի շարք գիւղական հասարակական կեանքի բնաւորական սովորութիւնների նկարագրութիւնը, ողջում-աղպէէր զառնալու, Ջրիդի, ևալլու, գերնզմանօրհնէքի, կարմիր կիւրակէի զրոսանքը:

Կարմիր կիւրակէի երկուշաբթի օրւանից սկսած բանասանզծը տալիս է մեղ գիւղացու ամարավին պարագմանց, զրոսանքների և առնասարակ կեանքի մանրամասն նկարագիրը, ուշտափնացութիւնները, համբարձման վիճակահանութիւնը, մի թաղման նկարագիր, որի կապը շատ թուլ է վիճապանութեան հետ և կամ, ամելի լաւ ասել, որ ամենելին կապ չունի (տես եր. 121), վարդալառը և սուրբ Կարապևանի ուխտագնացութիւնը, աղբիների մշակութիւնը և թուրքերի գողութիւնը (որ դարձեալ մի թուլ կապւած միջնաւիշպէ), մաթ եփնլը, արաղ քաշնլը, շուշուկս եփնլը, Գիւղական աշնանալին կեանքից նկարագրւած են նշանդրէքն և հարսանիքը շատ կենդանի կերպով, միան թէ սրգա ևս դարձեալ անկապ միջնավիշպէր են, Զմելակն կեանքից համաւու նկարագիր կալ ջրօրհնեաց և սուրբ Սարգսի տօնի, որով գրնթէ վերջանում է սովորութիւնների նկարագրութիւնը:

Այս սովորութիւնների և կեանքի երեսթների նկարագրութեան մէջ երեսում է Պոօշեանցի տաղմաղը; Նրա դիտելու նշանաւոր կարողութիւնն և նկարագրելու չնորհքը: Ով տեսել է Հապաստանի գիւղական կեանքը, նա պէտք է անշուշտ վկայէ Պոօշեանցի նկարագրութիւնների իրական լինելը: Աչքի ընկնող թերութիւններից կարելի է համարել նրա կեղծ դասական ոճը տեղ տեղ, որով սկսում է իւր վիճապանութիւնների գլուխներն և գործող անձանց դասական (classisch) և հին անուններ տալլ, որինակ՝ Արտաշիր, Հեթում, Պարէտ, Տիրան և ազն:

Աչքաթող անել կարելի չէ նաև Պոօշեանցի վիճապանութիւնների դիտաւորական (tendenziös) ուղղութիւնը: Ժամանակակից խնդիրները վիպասանին ևս առիթ են տւել լարմար տեղերում խօսելու հասարակական պակասութիւնների մասին: «Սու և Վարդիթերի» մէջ արդար աշքի չի ընկնում, ինչքան «Հացի Խնդրի», բայց մանաւանդ «Շահէն»-ի մէջ: «Սու և Վարդիթերի» մէջ երկու խնդիրներ են գրաւում վիճապանի ուշադրութիւնը, մէկը՝ քահանաների և առնասարակ եկեղեցականների տղիսաւթիւնը, երկրորդ՝ կրթութեան պակասութիւնն ու կանանց հարեմական կեանքը: Առաջին խնդրի մասին նա իւր կարծիքը լաւանում է ժա. գլխում, երես 93—94: Խոկ եկեղեցականների տղիսութիւնը նկարագրում է տէրտէրի քարոզով գլ. դ. երես 33. Պոօշեանցը քահանաներից կենդանի խօսք և բարի օրինակ է պահանջում: Ուսաման և կրթութեան մասին նա խօսում է հարեանցի կերպիւ գլ. ժզ, եր. 143, ուր նա պահանջում է աշխարհական-

Ներից գրել-կարդալ սովորել և ապէ չը թողնել միահն հոգևորականներին։ Կանանց հարեմական և ծածկւած զրութիւնից դուրս գալու ձգտումը ստիպում է երեխ բանաստեղծին այն Հանավանքի բակի տնաւրանը ստեղծելու, ուր հասարակութեան առաջ աղջիկը ձեռ է տալիս իւր սիրածին, որի հարկէ բնական չէ. այս սկզբունքն է դարձեալ Գարեգնին խօսեցնողը զլ. ի. եր. 184, ուր նա երեսը բաց պասկէ է պահանջում։ Պիտի նկատենք սական, որ այս վիպասանութեան մէջ նկատելի չէ այն հրապարակախօսի խզուն և ձեզ, որ այսպիսի խնդիրներում ունի վիպասանը իւր միւս երկերի մէջ. իւր կոչման ուղղի հասկացողութեամբ նա այսպիսի նկատողութիւնները ծանօթութիւնների մէջ է դնում. ալտեղ, օրինակ զլ. մէ. եր. 167։



### Ա Յ Ց Ի Խ Ն Դ Ի Բ Ը

Եմէշա յառաջ, մնաս բարեւաւ,  
Լցըու քսակէ փողով։  
Այսպէս խեղիստակիս էնձ քսակ եմ շնում։  
Կը սըսապլնէլ խորամանկութիւնս անշուշտ,  
Թէ ժամանակ վատնէի այդ անխելքի համար,  
Առանց զւարձանալու և օդտելու նորանով։

(Ոթէլլօ. Հանդէս ա. երրորդ տեսաբան)։

«Սօս և Վարդիթերուին չաջորդում է, թէն ոչ ժամանակազրական կարգով. «Հացի խնդիրը», որին հեղինակն իւր առանձին հրատարակութեան պատճաբանում շարունակութիւն է համարում «Սօս և Վարդիթերին»։ Այս երկու վիպասանութիւնների մէջ նա կամնում է «ժամանակի անհետացնող ժամկեներից» ազատել «Հալաստանի գլխաւոր նահանգի տեղական կեանքի պատճերը իւր բարբառի, առածների, աւանդութիւնների և ծէսերի հետ, որ գողութիւն ունէին մնր ներկայ կեանքի առաջին շրջանում։ Տեսնենք ակժմ թէ ի՞նչպէս է կատարում վիպասանը իւր խոստումն։

Աշտարակի հարուստ գիւղացի Խէչաննեց Խէչանը մի բարիկենդան օր գիւղացի իշխանաւորների հետ խնճուքի նստած ժամանակ, գալիս են գիւղի փոքրիկ տղաները իրենց վարժապետից բարիկենդանի հարկը պահանջելու։ Այս աշակերտներից մէկը, Սմբատ անունով, Խէչանի խնդրով երգում է և այնպէս ոգեսրում է ծերունուն, որ սա բոլոր բազմականների առջև Սմբատի հօր հետ միասին իւր աղջիկ Հեղնարին բաշիք եա թմաւ է անում (նշանում է) Սմբատի հետ։

Խէչանի եղբայրը մնուած լինելով՝ նրան էր մնացել և իւր եղօր ժառանգութիւնը. իսկ ինքը տղաէ ժառանգ չունէր, նրա մնծ հարստութեան ժառանգ էր համարում իւր միակ աղջիկը, Հեղնարը, որ թէն ա-

ուանձին գեղեցկութիւն չունէր, բայց, իւր հարստութեան պատճառով, Աշտարակի երխտասարդների փափազած հարսնացուն էր, ուստի և Սմբատին շատուն էին նախանձում և աշխատում իւլել նրա ձեռից աղջ հարուստ աւարը. իսկ Սմբատն ինքը սիրահարւած էր որք Հերիքնազի վերաւ, որ Խէչանի քրոջ, Մարիամի աղջիկն էր. Չը նաեւըլ Հերիքնազի և Սմբատի դէպի միմնաց տածած փոխադարձ սիրուն նրանք երկուսն էլ սրբապը ժութիւն էին համարում հակառակել ճակատագրին, աւսինքն՝ բաշիք և արթմին. իսկ Հերիքնազը վճռում է միանգաման զոհել իւր սէրն, զոհել իրեն անձը, միան թէ Հեղնարին բաղդաւրացնէ. Արդէն բոլոր խոչընդուները բարձւած են, Հերիքնազը աշխատել է համոզել Հեղնարին պատճել Սմբատի հետ. որա հակառակորդ հարուստ, պարծենկու և երկչու Արշակը, որի հետ Հեղնարը գիշերավին տեսակցութիւններով դր ի ջակի միջոցով սիրահարւած էր, երկիւղից խելագարւած էր և հարսանիքն սկսւած եկեղեցի պիտի գնապին, երբ գործակալի և մովրովի հրամանը եասավուլ Մարգարի ձեռով պսակը խափանում է, Ահա ալստեղից է սկսում վիպասանութիւնը:

Պսակի խանգարման պատճառ եղող անձնաւրութիւնն է ալս բանաստեղծութեան գլխաւոր հերոսը, «Կա ացի խնդրի ապմինքն փող և հարստութիւն ձեռք բնրելու համար, ամեն չարագործութեան ընդունակ և մանկութիւնից գողութեան, աւազակութեան մէջ մնած հայրենազուրկ ոմն՝ միկատան Սաքօն. Սաքօն մովրովի պալատի մօտ մի գինետուն ունէր և միջնորդ էր գաւառի կառավարչի և ժողովրդեան մէջ, որոնց երկուսին էլ նախարում էր օգուտ քաղելով ժողովրդի օրէնքին տեղեակ չը լինելուց և մովրովի անկուշտ ազանութիւնից. Սաքօն իւր ժամանակի գաւառական հասարակութեան կենդրոնացնող ուժն էր. նա հասարակ ժողովրդի, հոգեորականների, բարձր և ստորին պաշտօնեաների, աւազակների և մարդասպանների բարեկամն էր և նոցա կարաբերութիւնների ղեկավարողը, կառավարչական տնօրինութիւնների ամենալաւ գործադրութեան միջոցը գտնողը, գիւղացիների խնդիրների և վէճների վճռողը և աւազակներին աւարի տեղը ցուց տւողն և ազանողը, Զարկար ալս ամենը կատարում էր նա օգուտ իւր գրանի, ամենքը գիտէին նրա անկադ փողասիրութիւնը, բայց դարձեալ ստիպւած էին նրան դիմելու իրենց գործին լաջող ելք տալու համար. Սաքօն ճանաչում էր Նրեանի գաւառի բոլոր գիւղերն և գիւղացիներին մի առ մի, գիտէր նրանց փոխադարձ կարաբերութիւնները, կարողութեան չափն. նա ծանօթ էր մովրովի կարաբերութիւններին իր մեծաւրների հետ, գիտէր հոգեորականների թուզ կողմերն և բոլորից էլ շահում էր չնչին մասն հանելով և իւր գործիք դարձող անձանց. Նրկար ժամանակ նա իւր աչքը տնկել էր Խէչանենց Խէչանի հարստութեան վերաւ և կամենում էր նրան ժառանգել, որի գիւրին ճանապարհը Հեղնարին կնութեան առնելն էր. բայց զգուշ պիտի վարւէր, որովհետև Խէչանն իրու

բնական խեղօք և աղնիւ մարդ, ասումէր ալդ հրէ շմիկիտանին, Նորնկ մալրովն էլ գիտէր Խէջանի հարստութիւնն և անհամբեր սպասում էր քամելու ալդ հիւթալից պատողն. իւր հաւատը դէպի Սաքօի ճարպիկութիւնն անսահման էր, ուստի և նրան էր լանձնել ալդ դործն առանց վլաննալու, որ սա վաղուց ալդ որսն իրեն համար էր պատրաստել. Սաքօն տարածում է իւր որոպալթի ցանցերն. հասալով Մարգարի պարզամտութիւնից օգտագելով նրան է խոստանում Հեղնարին և Խէջանի հարստութիւնը, որ կարողանաւ արգելել պսակն. Մոլորին, արդէն շացած իւր նպատակով, պաշտօնիցը դուրս հրաման է տալիս արգելել պսակն. իսկ գործակալ հաքը, օգուտ քաղելով իւր գիրքից, եկեղեցական արգելք է զնում պսակին. Պսակն արգելում է, բայց Սաքօն, չը կարողանալով տիրանալ իւր որսին, փորձում է բարեկամանալ Խէջանի հետ, ինամախօսներ և բարեխօսներ է մէջ ձգում, տէրութեան չորհակալութեան մէղալ է զնում իւր փողով Խէջանի համար. բայց ալս էլ չէ բաջողում. Անվեհեր աւազակն այժմ դիմում է աւազակների օգնութեան և կամննում է Հեղնարին փախցնել, բայց Հերլիքնաղը սպանում է աւազակներից մէկին և այս դաւն էլ անվաջող ելք է ունենում. Սաքօն անվաջողութիւնից վհատող անձն չէ. Նա անվաջողութիւնը իւր համար ընդհակառակն իբրև միջոց է ծառավեցնում. Խէջանը, իբրև մարդասպան, բանտն է դրում մոլրովի հրամանով, Խէջանը արժմ Սաքօի ձեռին էր. միկիտանը իւր բուռը խորամանկութեան հնարին դործ զրաւ զրաւելու պարզամիտ Սմբատի սիրտն և մկասաւ ծծել նրանց հարստութիւնը. Նա բարերար հանդիսացաւ Խէջանին և կարողացաւ անհնտացնել նրա կասկածը իւր չարամտութեան վերաց. Ահա երբ Սաքօն ինքն իւր նպատակին հասած կարող էր համարել, եկաւ արդարութեան վրէժինդրութիւնը, մովլրովի գործերին քննիչ եկաւ կառավարութեան կողմից և ժողովուրդը կեղեքոր մովլրով ընկաւ դատաստանի տակ. իսկ նրա աջ ձեռն, չարութեանց գործադիրն և խորհրդատուն աղասեց, ծախսելով իւր գինեստունն և գնաց Երևան՝ Խէջանի, որին անտեղի բանտն էր ուղարկել տւել, հաւատարմութիւնից օգուելու և նրա հարստութեան տիրանալու. Սաքօն նկատել էր Սմբատի կասկածն իւր հաւատարմութեան մասին, ուստի մի փորձ արաւ սպանել տալու նրան, սական ալդ ևս անվաջող անցաւ. «Սատանի վետի ոտն» Սաքօն կարողացաւ մինչև քննչի աչքից ծածկել Խէջանին և արգելով Սմբատին իւր ձանճ հասցնելու քննիչին. Այս դառն փորձութիւնների ժամանակ, Հեղնարն անկողնին էր ծառալում և հիւծւած միան հօր ազատութեանն էր սպասում, որ նրան տեսնի և շունչը տակ:

Եկաւ վերջապէս ազատութեան ժամը, վրէժինդրութեան ծարաւը Սաքօի գործիքին, Մարգարին, զրդեց օգնութեան համնելու Սմբատին և նրանք քննիչի հետ երբ մտան բանտն աղատելու Խէջանին, Սաքօն դեռ ևս չարունակում տալ իւր մեքենակութիւնները. Նա Խէջանին ստորագրել էր կամննում տալ իւր ազգին պարզմելու մուրհակը, որ դուռը բացւեց և հը-

չեց նրա տղասութեան աւետիսն. իսկ չարագործը փախաւ և կրկին խուսափիսց արդարադասութիւնից.

Խէչանը զարձաւ իւր տունը հալւած և մաշւած զնդանի կեանքով, տեսաւ իւր մահամերձ Հեղինարին, որ իւր նշանածը Հերիքնաղին էր պարգել և մեռնում էր հանդիսաւ հոգով իբրև մի հակ կին, որ իւր մողքերի պատիժը տանում է հանդարա հոգով՝ Ամբասն ամուռնանում է Հերիքնաղի հետ, լուսու թաղում է Հեղինարին, Մարիամին և Խէչանին.

Վրէժինդրութիւնը մզում է Մարգարին՝ Սաքօին դտնելու և պատժելու, բայց Սաքօի խորամանկութիւնն և խելքը դարձեալ չաղթանակը տանում է և եւստավուլը զո՞ն է լինում Սաքօի չաղութեան,

Այս է ահա 48 զվից բաղկացած 356 ութածալ երես ունեցող վիպատանութեան համառօտ բովանդակութիւնը, ուր հեղինակն, իւր ցանկութեան համաձախն, նկարադրում է դիւղական կեանքի հետևեալ սովորութիւններն և կողմներն, —բարիկենդանիւտ օն ախմբութիւնը, ձի արշաւը, բերան փակէք, ճլորթի, դրիջակ, խնամախօս, դատաստան և եազն։ Այս վիպասանութեան մէջ գործակից է գրեթէ բոլոր դիւղական և գաւառական հասարակութիւնը. —մոլորիլը, գրապիրներն, եսսավուշները, վարդապետները, քահանաները, դիւղավանները, հարուստ և աղքատ դիւղացիք, միկիտանը, աւաղակներն և վերջապէս քննիչը։

Օգուս քաղելով վիպասանութեան բովանդակութեան ընդարձակութիւնից, բանաստեղծը տեղ է տեւել թէ ընդարձակ և թէ համառօտ տեղադրական նկարադրութիւններին (տես զլ. Դ.). Առածներն և ժողովրդական ասացւածները նոյնպէս խնամքով ժողովւած և ըստ կարմարութեան զործ են դրած (զլ. ք. ժէ. խե. լէ. խր. խդ. եազն), որ արժէր հեղինակի բոլոր գործերից ժողովել և միասին դասաւորել:

Այս է ահա մօտասրապէս ան հարուստ նիւթն, որ մող տալիս է բանաստեղծը և որի համար նա ինքն ըստ ինքեան գրում է իւր բանաստեղծութիւնը. Սական աւշչափ չէ միաէն նրա տւածը. աւելի մնձ արժէք ունեցող մի բան ևս տւել է նա մող իւր տաղանդի շնորհիւ, որ ահա այս վիպասանութեան մէջ աղթել է հեղինակի դիտաւորութեանը. Պռօշեանցը կամեցել է մեզ առածների, սովորութիւնների և ծէսերի (ժողովածու տալ ու տեւել է մի հիմնալի նկարագիր քառասնական թւականի հակ ժողովրդի բարբի ու վարքի և վիրաւի մի բան աստեղծական արտադրութիւն և ոչ վիճակաղրական կամ ժողովրդագրական։

«Հացի Խոնդրի» հերոսը, միկիտան Սաքօն, մնձ վարպետութեամբ է նկարադրած. ալչ մի լուսանկարչական պատկեր է և ոչ թէ վրձինի կամ զրյունա հալորենազուրկ մի լաղդախնդիր է, որ իւր մանկութիւնը անցրել է գինելամառի խանութումու ապականւած հասարակութեան մէջ, ականատես

է եղել՝ մարդկակին ամենատգեղ գործերին և տևաել է մարդուս անարժան կողմերն. բնական խելքի տէր լինելով, ճանաչել է դարուս Աստուծում՝ առանց նագօի խրատների միշտ լաւ հասկացել է՝ ափաղ լցրու զրպանդ, փող սիրելի Ռողբիգօ» (Օթէլլօ Ա. Յ.)։ Ահա միկանի մանուկ աշակերտը դնումէ իւր բունը ամբողջ մի գաւառի սրառում և կեղեքում է ամենին, վիմարացնումէ զօրաւորներին ու տկարներին։ Նրա համար ոչ մի սուրբ և անձնունմիսելի բան չը կաէ. — «Սաքօն իր միսը կ'ուտի և մաքի դրածին կը հասնի... (Երես 270)։ Նա կողոպտել կը տաէ, կը կողոպտի, կը չարչարի, կը մեղաղրի, դասապարտել կը տալ անմեղին, անմեղ հաւ աղջկան փախցնել կը տաէ թուրք աւազակի ձեռովկ, մարդ սպանել կը տաէ, միան թէ փող ձեռք բերի. իսկ այս ամենն այնպիսի ողոր մողոր ճանապարհներով կը կատարի, որ վերջը կարող է խուսափել արդարութեան ձեռից էլ, վրէժինդրութեան կատաղութիւնից էլ։ Ահա մի կատարեալ Եագօ իւր չարութեամբ, որ սական իւր ժամանակում և երկրում ամենելին անծանօթ ոմն չէ, նրա անոնը լոտին անմիջապէս ճանաչում է աղդ հրէշին, Ամրաղ վիպասանութեան հերոսը Սաքօն է, որի խօսքերն և անունն տեսլ է գրքին, թէն աւելի լարմար կը լինէր վիպասանութիւնը հէնց Սաքօ անուանել, ինչպէս աղդ արել է այս գործի գերմաներէնի թարգմանիչը։ Եթէ Սաքօն կատարեալ տիպար է ժամանակի ծնունդ չարագործների մի տեսակին, Խէշաննց Խէշանը միւս կողմից տիպար է բարեսկրտ հին գլուղացու, որի փառասիրութիւնը միան հիւրասիրութիւնն է և բարեգործութիւնը, իսկ ցանկութիւնը՝ հեռու մնալ ուրիշների գործներից հանդիսատ խզմտանք ունենալու համար, Խէշանը մի աղնիւ և առողջ դատողութեան տէր մարդ է, նրան աշխարհավին փառքերն չեն հրապուրում, նա չէ ձգտում մէղալ ունենալու, չի ուզում գիւղապետ կամ դատաւոր դառնալ, նա ճանաչում է աւագաներին բոլորին էլ, բաց ոդ և ցանկութիւն էլ չունի նրանց հետ կռւելու։ Սաքօի խորամանկութիւնը լազբում է վերջապէս արդարասէր Խէշանին և նա հաւատում է սատանակ Սաքօին։ Դժբաղդութեան մէջ էլ Խէշանը մնծ է, գիտէ կրել ամենալ տանջանք և քրիստոնէական համբերովիւն ունի, միան ցաւումէ իր պատճառով հիւծողների վերաբ։ Խէշանը բարեսկրտ, անխարդախ և արդարասէր գիւղացու տիպարն է.

Միւս գործող անձնաւորութիւններից աչքի ընկողներն են Սմբատն, Հերիքնազն ու Հեղնարու Սմբատը ներկալացրած է իրբ իդէ ալ գիւղացի երիտասարդի, որ պարտաճանաչ է և զգացմունք ունի, չէ խուսափում վըտանգից և արիսասիրտ է։ Պարտաճանաչչութեան զգացումը լաղթում է նրա սիրուն, ինչպէս և Հերիքնազի սիրուն, որ նոխագէս իդէալ է գիւղացի օրիորդի, գեղեցիկ է, բարեսկրտ և անձնազն, պարտաճանանչ։ սոքա երկուսն ևս աւելի գաղափարական են, քան եթէ իրական անձնաւորութիւններ։

Իրական է Հեղնարի նկարագրութիւնը. հարուստ գիւղացու աղջիկ, արտաքին հրապուրներից գրեթէ զուրկ, բաւց հալարտ և ծածկամլտ, որի

բնաւորութեան լատկանիցն է վառասիրութիւնը, սա չէ սիրում աշխատասէր, գեղեցիկ և համեստ Սմբատին, ազ վնդուում է վալուն ամուսին, որին մատով ցուց տան գեղամիջին, Հեղծարի մահան անկողնում արած խոստովանքը թէն քիչ անբնական, բայց սրտաշարժ է, մանաւանդ իւր հօր հետ ունեցած խօսակցութիւնը:

Հարնանցի նկարագրւած և երկրորդական անձնաւորութեանց մէջ նշանաւոր են ե աս ավուշ Մարդարը, մովրովը, քննի չը և Արշակը, միանթէ քննիչը շատ իդէալական է նկարագրած: Հրաշալի են պատահմամբ և հարմանցի նկարագիրները գիւղացցոց, գիւղապետների, թուրք աւաղակների, եկեղեցականների պատկերներն, որոնք, քանի մի խօսք արտասանելով և կամ գործ կատարելով, բոլորովին ծանօթ են երեսում մեզ:

«Հացի Խնդրի» վիպական գաղափարն է չարութեան լաղթանակը, թէն չարութիւնը մասամբ չաղթուում է քննչի երեսալով և մովրովի և Սաքօի չարութիւններին վերջ տալով՝ սական բարուկան գեղեցկի պահանջը չէ չաղեցնում վիպասանը, որովհետև Սաքօն ազատուում է արդարադատութեան ձեռից, ազ ընդհակառակն նոր չարագործութիւնների ասպարէզ է բացուում Սաքօի առաջ՝ մոլլա դառնալով: Սորանով «Հացի Խնդրիրը» անկատար է մնում և վիպական ամբողջութիւն չէ կազմում, որ հարկաւ մի մնծ թերութիւն է. սական ազդ արդարանուում է թերեւս Պոօշեանցի իրական ուղղութեամբ, որովհետև աչքի առաջ ունենալով իրական մի տիպար, որ կեանքի մէջ գոյնը փոփոխելով զանազան կերպարանքով մնծամնծ ֆնաներ է տալիս հասարակութեան, չէ կամեցնել վերջ տալ աբանեղ Սաքօի քաջագործութիւններին, անպէս որ դեռ պէտք է սպասենք ակ վէպի վախճանին: Պոօշեանցի վիպական ուղղութեան ձևուումն, որ է արտաքին կեանքի պատկերը տալ, ֆնասել է նրա բուն բանաստեղծական արտադրութեան:

Գալով վիպասանութեան գրութեան ոմին, թէն ալդ պէտք էր առանձինն բոլոր վիպասանութիւնների մասին միանգամից քննել, բայց որովհետև «Հացի Խնդրիրը» ըստ իս Պոօշեանցի ցարդ հրատարակւած գլուխ—գործոցն (Chef—d'oeuvre) է, ուստի անտեղի չնմհամարում ակսեղ իսկ նկատելու, որ ալդ ոմը շատ ընդդարձակ է և անմշակ: Վիպասանութեանս մէջ կան գլուխներ և երեսներ, որոնք առանց որ և է ֆնասի կարող են գուրս ձգել և ոչ միան չեն խանգարիլ վիպասանութեանը, ազ կը գեղեցկացնեն: Ընդարձակ և առանց վիպասանութեան սերտ կապը աչքի առաջ ունենալով գրելու պատճառը՝ հարկաւ Պոօշեանցի ախ դիտաւորութիւնից է բղխում, որ նա ուղղում է ամենավն ինչ որ գիտէ և լսել է, առիթ ունենալ մի որ և է տեղ պատճել: ալդպիսով խանգարւում է վիպական ընթացքն և կարդացողի ուշադրութիւնը ցրւում: Խնչ կապ ունի գրագրի հերոսութիւնը «Հացի Խնդրի» մէջ, գործակալի ընդարձակ նկարագիրն, Շահազիզնանց-կամսագական կոչւած ամբողջ գլուխը, դոնադն Աստուծունն է և ազն (գլ. ի.

իւր. լր. խգ.), Ալսպիսի միջանկեալ և վիպասանութեան հետ կազ չունեցող հատուածներն շատ են վիասում Պո-օշեանցի վէտինին և անշուշտ գովիւի է աս բանաստեղծութեան վերսմաներէն թարգմանչի ընթացքը, որ ալպիսի կառուները բաց է թողել թարգմանութեան ժամանակ.

Ալսպիսի աւելորդ միջնամիջնորի պատճառը թերես հեղինակի առ ցանկութիւնն է, որ կամնում է ծաղրակ անը մոցնել կեանքի նկարագրութեան մէջ, ինչպէս օրինակ՝ Յաքուլի, Բամաղանի և Շահաղիպեան—կամսարականի նկարադրութիւնները. սակայն ծաղրակ անը նկարագրել չէ չաջողում Պո-օշեանցին իւր բոլոր վէպերի մէջ. և ազդ նրա թերութիւններից մէկն է:

Ալս պակասութեան հետ միասին նկատելի է և մի տեսակ յազգրական վարդապետող լեզու, որ երբեմն դառնում է ընթերցողին և սկսում է կամ խրատել և կամ մի բան ցանկանալ. Ալս, հարկաւ, վիպասանի ողիսալ ճաշակի հետևանք է և լաւ հեղինակութիւնների անծանօթութիւնը, որով ճաշակի զարգացումն պակասում է, ուստի և նկարադրութիւնների մէջ շատ անզամ անկաջող և անարևսու կոտրներ կան.

Ալս պակասութիւնների պատճառն անշուշտ վիպասանութեան անմշակութիւնն է. Պո-օշեանցը սովորութիւն չանի իւր գրածն մի անզամ ամբողջացնել և կտառ մշակել հետզհետէ թէ ըստ բավանդակութեան և թէ ըստ լեզուին, ուստի և նրա գործերն միշտ անկատարութեան տպաւորութիւնն են անում. Սրա հետ միասին ցանկալի էր, որ լարդելի վիպասանը աշխատուի նախ խոռափել լրադրական ոճերից և լեզուից և, երկրորդ, զարդացնէր իւր բանաստեղծական ճաշակն ընտիր և լրոպական վիպասանու, թիւններ կարդալով.